«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 30.11.2017 թ. թիվ 1000 Լ/Կ հրամանի

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 8 29.11.2017թ.

Վանաձոր

2017թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնագիրքը սահմանում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) էթիկայի սկզբունքները և էթիկայի նորմերի այն նվազագույն չափանիշները, որոնք Համալսարանն ակնկալում է իր աշխատողներից և սովորողներից, դրանց համապատասխան՝ աշխատողների և սովորողների իրավունքները և պարտականությունները, պատասխանատվությունը ծառայողական պարտականությունները կատարելու և սովորելու ընթացքում, ինչպես նաև ծառայողական պարտականություններից և ուսումից դուրս հարաբերություններում:

2. Սույնով Համալսարանը հավաստում է կաշառքի և կոռուպցիայի նկատմամբ իր անհանդուրժողական լինելու քաղաքականությունը:

3. Էթիկայի կանոնները նորմեր են, որոնք միտված են ապահովելու Համալսարանի աշխատողների և սովորողների պատշաճ էթիկան, բացառելու հանրային և մասնավոր շահերի բախումը, ամրապնդելու հասարակության վստահությունը Համալսարանի և ՀՀ կրթական ոլորտի նկատմամբ:

4. Էթիկայի կանոնները սահմանում են Համալսարանի աշխատողների գործառույթների իրականացման, աշխատողների և սովորողների պարտականությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ կանոններ, որոնց ապահովումը նպատակաուղղված է Համալսարանի հեղինակության և համբավի, ինչպես նաև Համալսարանի կողմից մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարձրացմանը:

5. Էթիկայի կանոնների առաջնային նպատակներն են՝ Համալսարանի գործունեության թափանցիկության բարձրացումը, փոխադարձ վստահության և համերաշխության մթնոլորտի ստեղծումը ինչպես աշխատողների միջև, սովորողների միջև, այնպես էլ աշխատողների, սովորողների ու Համալսարանի հետ առնչվող բոլոր անձանց միջև, ինչը կնպաստի Համալսարանի կողմից բարձրորակ ծառայությունների անթերի մատուցմանը և Համալսարանի մրցունակության բարձրացմանը:

6. Էթիկայի կանոնների նպատակներից են նաև ակադեմիական ազնվության արմատավորումը, շահերի բախման հնարավոր իրավիճակների նկարագրումը և դրանց լուծման կամ կանխարգելման համար հնարավոր միջոցառումների նախատեսումը:

II. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

7. Շահերի բախումն այն իրավիճակն է, որում համապատասխան անձինք գտնվում են այնպիսի դիրքում, երբ չեն կարող ճիշտ դատողություններ անել կամ ըստ հարկի գործել, քանի որ նրանք որևէ կապ կամ պայմանագրային հարաբերություններ ունեն հակասող կամ տարբերվող շահեր հետապնդող երկու (կամ ավելի) կողմերի հետ: Այդուհանդերձ, այս երևույթը կարող է մեծապես պայմանավորված լինել տվյալ անհատի մշակութային առանձնահատկություններով կամ ավանդական միջավայրով:

8. Շահերի բախում է նաև այն իրավիճակը, երբ անձն իր գործառույթներն իրականացնելիս պետք է կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը կարող է մեկնաբանվել որպես իր

կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել: Շահերի բախում կարող է առաջացնել մասնավորապես՝

- իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրությունը բարելավելը,

- իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցությամբ կամ մասնակցությամբ կազմակերպության գույքային կամ իրավական դրությունը բարելավելը,

- սովորողներին անձնական նպատակներով շահագործելը,

- անձնական ֆինանսական շահով առաջնորդվելը և Համալսարանի առաջնայնությունները ստորադասելը,

- հետազոտության իրականացման ընթացքում գիտական անկողմնակալությունը քաղաքական կամ այլ շահերին ստորադասելը,

- Համալսարանի ռեսուրսները անձնական շահադիտական նպատակներով օգտագործելը,

- որոշում կայացնող մարմիններում անդամակցությունն անձնական շահերին ծառայեցնելը,

- իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակելը կամ պաշտոնում առջխադացում անելը, դրանց նպաստելը կամ աջակցելը:

9. Սույն կանոնների ներքո շահերի բախում է նաև՝

- այն իրավիճակը, երբ աշխատողը կհայտնվի այնպիսի իրադրությունում, որն ուղղակիորեն կամ անուղղակի կերպով նրանից կպահանջի ընտրություն կատարել Համալսարանի կամ Համալսարանի աշխատողների, սովորողների կամ շահառուների և իր սեփական, իր շահերի կամ իր հետ փոխկապակցված անձանց շահերի միջև,

- ամեն մի իրավիճակ, որի ընթացքում հարցականի տակ կարող է դրվել նրա անաչառությունը կամ անկողմնակալությունը, որոնք կհակասեն սույն կանոնների սկզբունքներին և նրա հետևողականությանը:

10. Սովորողների համար շահերի բախում է համարվում՝

- այն իրավիճակը, երբ սովորողը կհայտնվի այնպիսի իրադրությունում, որն ուղղակիորեն կամ անուղղակի կերպով նրանից կպահանջի ընտրություն կատարել Համալսարանի կամ Համալսարանի աշխատողների, սովորողների կամ շահառուների և իր սեփական, իր շահերի կամ իր հետ փոխկապակցված անձանց շահերի միջև,

- ցանկացած իրավիճակ, որի ընթացքում հարցականի տակ կարող է դրվել նրա անաչառությունը կամ անկողմնակալությունը, որոնք կհակասեն սույն կանոնների սկզբունքներին և նրա հետևողականությանը:

III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ

ԷԹԻԿԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ

11. Համալսարանի աշխատողը պարտավոր է պահպանել էթիկայի հետևյալ կանոնները.

1) Իր գործունեությամբ նպաստել Համալսարանի և ՀՀ կրթական համակարգի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը:

2) Հարգել մարդու արժանապատվությունը՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, պաշտոնական դիրքից, գույքային կամ այլ դրությունից, քաղաքացիությունից և քաղաքացիական կարգավիճակից:

3) Վեր դասել Համալսարանի շահերը սեփական շահերից և չձգտել շահույթ ստանալ՝ օգտագործելով իր պաշտոնը ՀՀ օրենսդրությանը հակառակ՝ պաշտոնական կամ ծառայողական դիրքի օգտագործմամբ կամ չարաշահելով այն:

4) Իր ծառայողական պարտականություններն իրականացնելիս լինել անաչառ, ազատ ազդեցություններից, ճնշումներից և այլ միջամտությունից, չընդունել որոշակի եղանակով գործելու կամ չգործելու որևէ հանձնագիր իրեն նշանակած կազմակերպությունից կամ մարմնից, կամ չընդունել որևէ հրահանգ ցանկացած անձից (բացառությամբ վերադասի), քաղաքական կուսակցությունից, հասարակական կամ կրոնական միավորումից կամ էլ որևէ այլ արտաքին աղբյուրից:

5) Չվատնել Համալսարանի ռեսուրսները կամ ոչ իրավաչափ ձևով չօգտագործել Համալսարանի տնօրինության ներքո գտնվող անձնական կամ առևտրային, այդ թվում՝ մտավոր սեփականության մասին տեղեկությունները՝ անձնական շահ ստանալու նպատակով կամ ի շահ որևէ այլ անձի կամ խմբի:

6) Չխոչընդոտել իրավախախտումների բացահայտմանը, հարգել, խրախուսել և պաշտպանել կոռուպցիայի մասին տեղեկատվության տարածումը:

7) Իր ծառայողական պարտականությունների կատարման համար չպահանջել և/կամ չընդունել որևէ կաշառք կամ որևէ այլ ֆինանսական միջոց կամ նվերներ, ծառայություններ, զվարճանքի հրավերներ կամ ցանկացած նման այլ առաջարկներ, կամ չփորձել ստանալ կամ ընդունել որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իր վրա որոշումներ կայացնելիս, խուսափել ցանկացած տեսակի հովանավորչությունից, իր վարքով իրեն կախվածության մեջ չդնել որևէ անձից, նույն արարքները չանել իր հետ փոխկապակցված կամ այլ անձանց միջոցով, կաշառելու կամ անձնական օգուտ առաջարկելու ամեն մի փորձի մասին անմիջապես հայտնել Համալսարանի ռեկտորին, կառավարման մարմնի ղեկավարին կամ իրավապահ մարմիններին:

Իրավական ակտերի պահանջների պահպանմամբ և հրապարակայնության ապահովման պայմաններում Համալսարանի աշխատողը կարող է ստանալ հիշարժան նվեր, պարգև կամ արտոնություն, եթե դա չի կարող գնահատվել իբրև աշխատողի վրա ազդելու դիտավորություն կամ նրա անաչառությունը կասկածի տակ դնելու հիմք:

8) Իր պարտականությունների կատարման ժամանակ շահերի բախման խնդիր առաջանալու դեպքում այդ մասին անմիջապես տեղյակ պահել վերադասին կամ Համալսարանում գործող էթիկայի հանձնաժողովին:

9) Իր գործառույթներն իրականացնելիս չառաջնորդվել իր, իր հետ փոխկապակցված կամ այլ անձանց շահերով:

10) Քննարկման ենթակա հարցերում (ներառյալ կադրերի կամ մարդկային ռեսուրսների հարցերով զբաղվող բաժինների կողմից աշխատակիցների նշանակման և առաջխաղացման, ֆինանսական, պայմանագրային և այլ համապատասխան հարցերը) իր կամ իր հետ փոխկապակցված անձի որևէ անձնական շահի առկայության դեպքում Համալսարանի ռեկտորին կամ կառավարման մարմնի ղեկավարին զրավոր հայտնել այդ մասին նախքան քննարկման սկիզբը և պաշտոնապես հրաժարվել այդ հարցերի քննարկմանն ու քվեարկությանը մասնակցելուց:

11) Համալսարանի կառավարման և ղեկավարման հետ կապված ներքին իրավական ակտեր ընդունելու և կիրառելու իր կոլեկտիվ իրավասությունը կամ անձնական պատվիրակված իրավասությունն իրականացնելիս ապահովել, որ այդ կանոնները համապատասխանեն ՀՀ օրենսդրությանը և էթիկայի սկզբունքներին:

12) Իրականացնել ներքին աուդիտի և ռիսկերի կառավարման այնպիսի գործընթացներ, որոնք հնարավորություն կտան Համալսարանի աշխատողներին, սովորողներին և շահառուներին համոզվելու, որ Համալսարանի ֆինանսական և մյուս գործերն իրականացվում են արդար, թափանցիկ, գործուն և արդյունավետ եղանակով:

13) Ապահովել, որ իր անմիջական ղեկավարության ներքո գտնվող բոլոր աշխատողները իրազեկ լինեն համապատասխան օրենսդրությանն ու կանոններին և դրանք չպահպանելու հետևանքներին, նպաստել էթիկական վարվեցողության պահպանմանը:

14) Հետազոտական գործունեության ընթացքում ցուցաբերել ակադեմիական ազնվություն, չզբաղվել գրագողությամբ, կատարել հղումներ և ուրիշի աշխատանքն իրեն չվերագրել, չներկայացնել այլ անձանց աշխատանքը որպես սեփական աշխատանք, չկեղծել հետազոտության արդյունքները և պահպանել էթիկայի սկզբունքները՝ անձնական տվյալների պաշտպանության առումով, կամ որոշակի առարկայական ոլորտներում այլ հատուկ սկզբունքներ:

15) Չդրսևորել խտրականություն կամ չհետապնդել գործընկերներին, հարգել բազմակարծությունը և խոսքի ազատությունը:

16) Հարգել և պաշտպանել սովորողների ակադեմիական ազատությունը:

12. **Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատողը, նախորդ կետում նշվածների հետ մեկտեղ.**

1) պետք է անաչառ, ճշմարտացի և արդարացի լինի սովորողների գիտելիքները գնահատելիս, նրա կողմից գիտելիքի գնահատումը պետք է լինի հիմնավորված և անկողմնակալ.

2) չպետք է սահմանի գիտելիքների, հմտությունների, կարողությունների գնահատման չափազանց բարձր պահանջներ՝ նախապես նվազեցնելով բարձր գնահատական ստանալու հավանականությունը.

3) իրավունք չունի սովորողին տրամադրելու նախապես չսահմանված նյութեր, բարձրացնելու կամ իջեցնելու սովորողի գնահատականը իր հայեցողությամբ, առաջադիմությունն

արհեստականորեն բարձրացնելու նպատակով սովորողի փոխարեն ուղղելու նրա թույլ տված սխալները կամ քողարկելու դրանք:

13. Համալսարանի սովորողը պարտավոր է պահպանել էթիկայի հետևյալ կանոնները.

1) Լինել արժանապատիվ, համբերատար, հարգալից վերաբերմունք դրսևորել Համալսարանի սովորողների, աշխատողների և բոլոր այն անձանց հանդեպ, ում հետ առնչվում է իր ուսման ընթացքում, պահպանել հավասարակշռվածություն և զսպվածություն նրանց հետ հարաբերություններում:

2) Հարգել մարդու արժանապատվությունը՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, պաշտոնական դիրքից, գույքային կամ այլ դրությունից, քաղաքացիությունից և քաղաքացիական կարգավիճակից:

3) Չխոչընդոտել իրավախախտումների բացահայտմանը, հարգել, խրախուսել և պաշտպանել կոռուպցիայի մասին տեղեկատվության տարածումը:

4) Համալսարանի աշխատողներին չառաջարկել և/կամ չտալ որևէ կաշառք կամ որևէ այլ ֆինանսական միջոց կամ նվերներ, ծառայություններ, զվարճանքի հրավերներ կամ ցանկացած նման այլ առաջարկներ, կամ չփորձել տալ որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իր ուսման կամ այլ անձանց աշխատանքի վրա՝ որոշումներ կայացնելիս, իր վարքով իրեն կախվածության մեջ չդնել որևէ անձից, նույն արարքները չանել իր հետ փոխկապակցված կամ այլ անձանց միջոցով, կաշառելու կամ անձնական օգուտ ստանալու ամեն մի փորձի մասին անմիջապես հայտնել Համալսարանի ռեկտորին կամ իրավապահ մարմիններին:

5) Ուսման ժամանակ շահերի բախման խնդիր առաջանալու դեպքում այդ մասին անմիջապես տեղյակ պահել Համալսարանի ռեկտորին կամ Համալսարանում գործող էթիկայի հանձնաժողովին:

6) Չվատնել Համալսարանի ռեսուրսները կամ ոչ իրավաչափ ձևով չօգտագործել Համալսարանի տնօրինության ներքո գտնվող անձնական կամ առնտրային, այդ թվում՝ մտավոր սեփականության մասին տեղեկությունները՝ անձնական շահ ստանալու նպատակով կամ ի շահ որևէ այլ անձի կամ խմբի:

7) Ուսման կամ հետազոտական գործունեության ընթացքում ցուցաբերել ակադեմիական ազնվություն, չզբաղվել գրագողությամբ, կատարել հղումներ և ուրիշի աշխատանքն իրեն չվերագրել, չներկայացնել այլ անձանց աշխատանքը որպես սեփական աշխատանք, չկեղծել հետազոտության արդյունքները և պահպանել էթիկայի սկզբունքները՝ անձնական տվյալների պաշտպանության առումով կամ որոշակի առարկայական ոլորտներում այլ հատուկ սկզբունքներ:

8) Քննություններին և գնահատման այլ ձևերին մասնակցելիս չխաբել, չօգտագործել խաբեությամբ դրական գնահատվելու ցանկացած միջոց, անհատապես կամ խմբակային չարտագրել այլոց աշխատանքը կամ չփորձել ձեռք բերել որևէ արտոնություն՝ ցանկացած ձևով

դա խթանելու միջոցով, կամ դիտավորությամբ թույլ տալով որևէ այլ անձի իր անունից առաջարկելու խրախուսական որևէ միջոց:

9) Այլ սովորողների փոխարեն չներկայանալ, նրանց փոխարեն չկատարել ուսումնական առաջադրանքներ, չներկայացնել այլ անձանց կողմից պատրաստված ուսումնական առաջադրանքներ:

10) Պատրաստի ուսումնական նյութերը չներկայացնել որպես սեփական աշխատանքի արդյունք:

11) Դասի ժամանակ կամ գնահատման գործընթացում չօգտագործել բջջային հեռախոս կամ կապի այլ միջոցներ, եթե դա չի պահանջվում տվյալ դասի կամ գնահատման գործընթացում:

IV. ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

14. Համալսարանում ՀՀ օրենսդրության համաձայն աշխատանքային պայմանագրով աշխատողները, ինչպես նաև սովորողները, բացի Համալսարանի ներքին կարգապահական կանոններից, պետք է պահպանեն նաև սույն էթիկայի կանոնները, Համալսարանի ձևավորված հեղինակության պահպանման և շարունակական բարելավման նպատակով պարտավոր են ցուցաբերել անշեղ նվիրվածություն էթիկայի հետևյալ 14 սկզբունքներին.

1) Բարեվարքություն:

Բարեվարքությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների առօրյա աշխատանքում ընդունված բարոյական և էթիկական արժեքների, սկզբունքների և նորմերի շարունակական կիրառումն է՝ առաջադիր նպատակներին ու շահառուներին լավագույնս ծառայելու և նրանց շահերը պաշտպանելու համար:

Բարեվարքությունը կոռուպցիայի և դրա տարբեր դրսևորումների դեմ պայքարի առավել ընդգրկուն և կառուցողական հասկացություն է, որին հետևելով՝ կարելի է առողջացնել կրթության համակարգը:

Բարեվարքության սկզբունքի առանձին կիրառությունները վերաբերում են ազնիվ և բաց եղանակով գիտելիքներ տալու, ստանալու և տարածելու բարձրագույն կրթության համակարգի բարձր առաքելությանը:

2) Ազնվություն:

Ազնվությունը ենթադրում է լինել ճշմարտախոս և հավաստի ներկայացնել իրականացրած արարքները: Ազնվությանը հակասում է նաև որևէ արարքի մասին լռելը, հաղորդելուց խուսափելը:

Համալսարանի բոլոր աշխատողները և սովորողները պետք է ապահովեն, որ իրենց կողմից դրսևորվող վարքագիծը լինի ազնիվ և վստահության արժանի, այսինքն՝ այնպիսի վարքագիծ, որը կանոնավոր կերպով բացառի ցանկացած խարդախություն, ստախոսություն, խաբեություն, գողություն, շորթում կամ որևէ այլ անազնիվ արարք: Այսպիսի վարքագիծը բացառում է նաև փաստացի քրեական հետապնդման ենթակա որևէ արարք:

Սովորողների բոլոր աշխատանքները պետք է անաչառ կերպով գնահատվեն՝ հաշվի առնելով այդ աշխատանքների բուն էությունը և բացառելով ցանկացած արտոնություն, օրինակ՝ կաշառք, սեռական բնույթի գործողություններ և այլն: Սովորողները չպետք է ենթարկվեն որևէ անազնիվ ճնշման, որն ուղղված լինի պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից հեղինակած դասագրքերը գնելուն կամ մասնավոր վճարի դիմաց լրացուցիչ դասեր պարապելուն: Այս դիտանկյունից ազնվությունը բացառում է այն վարքագիծը, որը «բացասաբար է անդրադառնում ակադեմիական աստիճանների որակի վրա»:

Ֆինանսական պարտականություններ իրականացնող աշխատողները պետք է հավատարիմ լինեն «ազնիվ և թափանցիկ հաշվապահություն» սկզբունքին, խուսափեն ցանկացած ֆինանսական խարդախություն կամ գողություն կատարելուց, օրինակ՝ գնումների գործընթացներում:

Ազնվությունը ենթադրում է լինել ճշմարտախոս միջանձնային բոլոր հարաբերություններում:

Համալսարանի բոլոր սովորողները, ազնվության սկզբունքին համաձայն, գնահատման համար պետք է ներկայացնեն բացառապես իրենց կողմից կատարված աշխատանք՝ ցուցաբերելով ակադեմիական ազնվություն, խուսափելով ցանկացած տեսակի գրագողությունից և խարդախությունից, չպետք է առաջարկեն կաշառք, սեռական բնույթի որևէ առաջարկ և այլն, պետք է խուսափեն գողություն անելուց և այլ սովորողներից դրամ շորթելուց, ցանկացած նպատակով կեղծ փաստաթղթեր կազմելուց և/կամ այդպիսիներից օգտվելուց:

3) Ճշմարտություն:

Ճշմարտությունը հաղորդակցության ժամանակ իրականության ներկայացումն է, հաղորդումը առանց դեպքերի, իրադարձությունների, տեղեկատվության աղճատման և ստի:

Համալսարանի բոլոր աշխատողները և սովորողները պարտավոր են ասել ճշմարտությունը և չպետք է ստեն, պետք է պահպանեն ճշմարտությունը և չխոչընդոտեն ճշմարտության ազատորեն բացահայտման ու տարածման գործում:

Այս սկզբունքը տարածվում է ինչպես վարչական գործառույթների իրականացման, դասավանդման և ուսումնառության, այնպես էլ հետազոտությունների իրականացման վրա: Սա կապված է բարձրագույն կրթության ընդհանուր նպատակի հետ՝ ապահովելու ճշմարտության բացահայտումը, գիտելիքի ազատ և բաց տարածումն ու զարգացումը:

Այս սկզբունքն ընդգրկում է քննադատական վերլուծություն և հարգանք հիմնավորված տեսակետների, մտքերի ազատ փոխանակման և խոսքի ազատության նկատմամբ:

4) Թափանցիկություն:

Համալսարանի աշխատողները և սովորողները ազատ են հստակորեն բացահայտել, հանրայնացնելու Համալսարանի գործունեության հետ կապված ճշմարիտ տեղեկատվություն, կանոններ, ծրագրեր, գործընթացներ և գործողություններ, իսկ Համալսարանում բարձրաստիճան ղեկավար և կառավարման պարտականություններ ունեցող աշխատողները պարտավոր են գործել բացահայտ, կանխատեսելի և հասկանալի՝ խթանելու մասնակցությունը և հաշվետվողականությունը, նրանք հատուկ պարտավորություն ունեն տրամադրելու առավելագույնս թափանցիկ տեղեկատվություն Համալսարանի բոլոր աշխատողներին, սովորողներին և շահառուներին:

Համալսարանում բարձրաստիճան ղեկավար և կառավարման պարտականություններ ունեցող աշխատակազմը, որը պատասխանատու է նշանակումների և պաշտոնի առաջխաղացումների համար, պետք է ապահովի դրանց կատարման հիմքում ընկած ընթացակարգերի թափանցիկությունը:

Այսուհանդերձ, թափանցիկության սկզբունքը, անհրաժեշտության դեպքում, պետք է չափավորվի՝ հաշվի առնելով, որ հարկ եղած դեպքում պետք է զուգահեռաբար պահպանվի անձնական տվյալների գաղտնիությունը:

Համալսարանի այն ուսանողները, որոնք ուսանողական մարմինների ներկայացուցիչներ են, պետք է համապատասխան թափանցիկ մոտեցում ցուցաբերեն այդ մարմինների գործունեության մասին տեղեկատվություն տրամադրելիս հատկապես ուսանողության լայն զանգվածներին:

5) Հարգանք այլոց նկատմամբ:

Այս սկզբունքը նախատեսում է՝

- հարգանք մարդկանց արժանապատվության, ֆիզիկական և մտավոր ամբողջականության նկատմամբ և ընդգրկում է նաև մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, ինչպես նաև ֆիզիկական բռնությունից, վիրավորանքներից, հոգեբանական ճնշումներից պաշտպանությունը.

- հարգանք այլոց իրավունքների, նախապատվությունների, դյուրազգայնության նկատմամբ:

Այլոց նկատմամբ հարգանքի սկզբունքը վտանգվում է, երբ մարդկանց արարքները նպատակ են սպառնալիք պարունակել կամ թշնամանք դրսևորել այլ անհատների նկատմամբ:

Վիրավորական կամ սեռական բնույթի վարքագիծը, ինչը նվաստացնում, վիրավորանք սպառնում կամ վիրավորում է անձին՝ պայմանավորված դիմացինի անձնային հատկանիշներով կամ համոզմունքներով, խախտում է այլոց նկատմամբ հարգանքի սկզբունքը:

Այլոց նկատմամբ հարգանքն առնչվում է նաև անձանց քաղաքացիական, քաղաքական, սոցիալական և մշակութային իրավունքներին, նախատեսում է անձանց վերաբերյալ բռնությունների և ոտնձգությունների, նրանց նկատմամբ դրսևորել առանց խտրականության, թափանցիկ և հավասար վերաբերմունք:

6) Վստահություն:

Միջավայրում, որտեղ բոլորը ցուցաբերում են այլոց նկատմամբ հարգանք, նպատակ է պահպանել նաև վստահության սկզբունքը: Այս սկզբունքի իմաստն այն է, որ Համալսարանի բոլոր աշխատողները և սովորողները կարող են միանգամայն վստահ լինել այլոց անաչառության, ճշմարտացիության և բարեվարքության դրսևորման հարցում: Այդ դեպքում նրանք կարող կվստահեն միմյանց և կարող են ակնկալել, որ իրենց կվստահեն նաև Համալսարանի շահառուներն ու գործընկերները, գիտահետազոտական ազգային և միջազգային ակադեմիական համայնքը:

Համալսարանի բոլոր աշխատողների և սովորողների միջև փոխադարձ վստահությունը աշխատանքային և ուսումնական այն կորիզն է, որը խթանում է գաղափարների ազատ փոխանակում, ստեղծագործական միտք և անձի զարգացում:

7) Հաշվետվողականություն:

Համալսարանի բոլոր աշխատողները և սովորողները պատասխանատու են իրենց լիազորությունները պատշաճ իրականացնելու համար և հաշվետու են ինչպես ներքուհական վերադասության տրամաբանությամբ, այնպես էլ շահառուների առջև:

Այն դեպքում, երբ Համալսարանում բոլորը հարգում և վստահում են միմյանց, հաշվետվողականության սկզբունքն ավելի ամուր հիմքերի վրա է դրվում:

8) Արդարացիություն:

Արդարացիությունը Համալսարանի բոլոր աշխատողների և սովորողների միջև հարաբերություններում միմյանց նկատմամբ անաչառության դրսևորումն է: Սա ենթադրում է օրինական, թափանցիկ, անկողմնակալ, կանխատեսելի, հետևողական, օբյեկտիվ և ազնիվ չափանիշների վրա հիմնված վարքագիծ՝ դասավանդման, գնահատման, հետազոտության, առաջխաղացման և աստիճանների ու պաշտոնների նշանակման, ինչպես նաև այլ պարտականությունների իրականացման գործում՝ աշխատող-աշխատող, աշխատող-սովորող և սովորող-սովորող հարաբերություններում:

9) Հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն:

Համալսարանի բոլոր աշխատողները և սովորողները պետք է պահպանեն կայունության, հավասարության և արդարության՝ կրթական և սոցիալական արժեքները, ինչպես նաև ճանաչեն ապագա և ներկա սերունդների իրավունքներն ու պարտականությունները: Պետք է գործնականում կիրառեն արդար, թափանցիկ, ներառական ու կայուն քաղաքականություն և գործելակերպ:

Սոցիալական արդարության սահմանումը հատուկ շեշտադրում է խտրականության բացառումը և ռասիզմի, կողմնակալության ու խտրականության դեմ պայքարը, որը պետք է ցուցաբերվի բոլոր փոխհարաբերություններում ոչ միայն Համալսարանում,այլև Համալսարանից դուրս: Այս սկզբունքի ենթատեքստում առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում բարձրագույն կրթության հասանելի լինելը հնարավորինս շատ անձանց համար, որոնք ունեն համապատասխան ակադեմիական որակավորում: Սա ներառում է մշտական կրթության պահանջների իրագործում առավել շատ անձանց համար:

Համալսարանի բոլոր աշխատողները և սովորողները պետք է պատրաստակամ լինեն մասնակցելու այնպիսի նախաձեռնությունների, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու Համալսարանի «լայն հասանելիությունը»: Մասնավորապես, դա կլինի ոչ միայն ուսանողների հավաքագրումը հասարակության ավանդաբար թերի ներկայացած շերտերից, այլև այս ուսանողներին օժանդակություն ցույց տալը՝ ուղղված բարձրագույն կրթության ուսումնառության ծրագրերում վերջիններիս առաջընթացի հետ կապված խոչընդոտները հաղթահարելուն և այդ ծրագրերում ընդգրկված լինելուն:

10) Կրթական համակարգի և կրթական հաստատությունների ժողովրդավարական և էթիկական ղեկավարում և կառավարում:

Համալսարանի բոլոր աշխատողները և սովորողները պետք է ընդունեն, որ Համալսարանի ղեկավարումը և կառավարումը պետք է հիմնվեն բոլոր համապատասխան անձանց

ժողովրդավարական ներգրավվածության վրա, և ղեկավարվեն էթիկայի [illegible] առաջնորդություն իրականացնող կառավարիչների կողմից:

Այս սկզբունքով կարևորվում է նաև Համալսարանի բոլոր աշխատողների և [illegible] որոշումների կայացման մեջ մասնակցության խրախուսման անհրաժեշտությունը: [illegible] Համալսարանի ղեկավարման և կառավարման բարձրաստիճան պաշտոն[illegible] աշխատողները կոնկրետ պարտավորություններ ունեն ապահովելու, որ [illegible] ղեկավարումը և կառավարումը հենվի աշխատողների և սովորողների՝ ժողովրդավարական հիմունքներով լիարժեք ներգրավվածության վրա:

11) Որակյալ (բարձրակարգ) կրթություն:

Այս սկզբունքը ներառում է Համալսարանի բոլոր աշխատողների և սովորողների [illegible] հանձնառությունը՝ հնարավորինս բարձր որակի կրթություն տրամադրելու հարցում:

Համալսարանի բոլոր աշխատողները պետք է լիարժեք կերպով հանձնառ[illegible] սովորողներին ապահովելու ամենաբարձր որակի դասավանդմամբ և [illegible] ինչպես նաև ապահովելու սովորողների՝ հնարավորինս բարձր մակարդակի [illegible] ապահովելու կրթական և գիտահետազոտական հնարավորին բարձր արդյունքներ [illegible] նպաստելով գիտելիքի առավելագույն հնարավոր զարգացմանը, իսկ [illegible] լրջորեն հանձն առնեն իրենց ակադեմիական աշխատանքը կատարել [illegible] ակտիվ մասնակցություն ունենան որակի գնահատման և բարձրացման գործընթացներում:

12) Անձնական կատարելագործում և համակարգային բարելավում:

Համալսարանի բոլոր աշխատողները և սովորողները պետք է գիտակցեն [illegible] կրթության համակարգի շարունակական բարելավման գործում [illegible] կատարելու կարևորությունը, նրանցից յուրաքանչյուրը պետք է պատասխանատու [illegible] անձնական զարգացման համար: Սա պետք է ներառի նորամուծությունների [illegible] փոփոխություններին հարմարվելու ճկունությունը:

Կրթության ոլորտի մասնագետների համար սա կարելի է նկարագրել որպես [illegible] պարտավորություն թե մասնագիտական զարգացման միջոցով անձի [illegible] ձգտելու, թե համակարգի ընդհանուր զարգացմանը ձգտելու առումով, [illegible] հերթին նպաստում են անձի զարգացմանը: Իսկ սովորողները պետք է [illegible] օգտագործեն իրենց ներկայացուցչական գործունեության [illegible] կատարելագործման համար առաջացած բոլոր հնարավորությունները [illegible] բարձրագույն կրթության համակարգերի կատարելագործմանը [illegible] մակարդակներում:

13) Ինստիտուցիոնալ ինքնավարություն/ինստիտուցիոնալ անկախություն:

Այս սկզբունքի բաղադրիչ մասերից մեկը ազգային կրթական համակարգի [illegible] հաստատություններին համապատասխան ինքնավարություն և անկախություն [illegible] պահպանելու անհրաժեշտության ճանաչումն է, ինչը կբացառի [illegible] չափազանց կենտրոնացված քաղաքական հսկողությունը:

Այս սկզբունքի համատեքստում հատկապես կարևոր է, որ Համալսարանի [illegible] և սովորողները արժևորեն ինքնավարությունը՝ ղեկավարման և կառավարման [illegible]

գործառույթները լիարժեք ու գիտակցված կատարելու և այս խնդրի առնչությամբ անտեղի արտաքին միջամտություններին դիմակայելու միջոցով:

14) Միջազգային համագործակցություն:

Համալսարանի բոլոր աշխատողները և սովորողները պետք է ճանաչեն կրթական գործունեության մեջ դրական միջազգային համագործակցության կարևորությունը:

Համալսարանի աշխատողները պետք է հիմնեն դասավանդման, գիտական գործունեությունը և հետազոտական աշխատանքները միջազգային մտածելակերպի խորը ընդգրկվածության վրա: Նրանք նախաձեռնող դիրք պետք է ցուցաբերեն Համալսարանի սովորողների համար ստեղծելու միջազգային փոխանակման հնարավորություններ և պետք է ռեսուրսներ փնտրեն դրանց աջակցելու համար: Սրան համապատասխան՝ Համալսարանը պետք է կարողանա տրամադրել միջազգային որակին համարժեք ծրագրեր:

Ի լրումն ասվածի՝ Համալսարանի միջազգային ամբողջ գործունեության ընթացքում էական է շեշտել միջազգային գործընկերների հետ համերաշխության և նրանց նկատմամբ արդար վերաբերմունքի կարևորությունը:

Համալսարանի սովորողները պետք է անձամբ և իրենց ներկայացուցչական կազմակերպությունների միջոցով ակտիվորեն ձգտեն դառնալու միջազգային գիտական համայնքի անդամներ՝ իրենց կրթական փորձառության շրջանակում լիովին ինտեգրվելով միջազգային հեռանկարներին:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Ամեն մի ոչ էթիկական վերաբերմունք կամ էլ գործելակերպ չի կարող արդարացվել այն պատճառաբանությամբ, թե դա արվել է մեկ այլ անձի հրահրումով, եթե նույնիսկ այդ անձը բարձր պաշտոնյա է կամ Համալսարանի ղեկավար անձ:

16. Սույն էթիկայի կանոնների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը:

17. Սույն կանոնագրքի կանոնների և սկզբունքների յուրաքանչյուր խախտում աշխատանքային կարգապահության խախտում է և առաջացնում է համապատասխան կարգապահական պատասխանատվություն: